

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՎԼՎՈՒՆՈՒ «ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՐԱՄԵԱՆՍ ՆԱՀԱՆԳԻ» ԵՐԿՐ

Ողբի ժանրը, ծագելով նախամաշտոցյան շրջանում, հետագայում գրականացվել և հետաքրքրական դրսևորումներ է ունեցել: Ժողովրդական սգո ծեսի մի բաղկացուցիչ մասը լինելով՝ նաև սկիզբ է տվել պատմական և այլ թեմաներով ողբի ժանրատեսակների առաջացմանը¹: Մասնավորաբար պատմական ողբի յուրահատկությունները պայմանավորված են այս ժանրին բնորոշ թեմաներով, այլապես այն բնութագրելը չափազանց դժվար կլիներ²: Այդ առանձնացումը կատարում են նախ իրենք՝ հեղինակները՝ որոշ չափով հեշտացնելով ուսումնասիրողի և ընթերցողի գործը:

Եթե միայն անդրադառնանք առավել հայտնի պատմական ողբերին, ապա դրանք ուշագրավ մի շարք կներկայացնեն: Այսպես, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջին գլուխը (Գ գրքի ԿԸ գլուխը), Դավթակ Քերթողի «Ողբ ի մահն Ջևանշերի...», Գր. Նարեկացու «Մատյան Ողբերգության» պոեմը, Ն. Ծնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի (Ողբ հայրենասիրի)» վեպը: Ամշուշտ, թվարկումից դուրս են մնացել բազմաթիվ ու բազմաբնույթ ծիսական երգերը՝ մահերգերը,³ ուշ միջնադարում ստեղծված մեծաթիվ բանաստեղծություն-ողբերը և այլն:

Գրական այս տեսակը սկզբում գրվել է արձակ, իսկ այնուհետև՝ չափածո: Մասնագետները գտնում են, որ չափածոյի վերածումը տեղի է ունեցել 12-րդ դարից սկսած⁴: Նման մոտեցումն ընդհանուր առմամբ ճիշտ է, չնայած Մագիստրոսի (990-1058 թթ.) Ողբը⁵ գրված է չափածոյի սկզբունքներով արդեն 11-րդ դարում և կազմում է Սարգիս Ա-նեցի վարդապետին ուղղված թվով ԺԺ (19-րդ) թղթի⁶ մի մասը:

Գրված է 1045 թ. Անիի Բագրատունյաց վերջին գահակալ Գագիկ II-ի գահազրկման և հայոց թագավորության անկման առնչությամբ: Թեև Գագիկին իշխանը չի համակրում, բայց ողբում է հայրենի երկրի կորուստը՝ մշելով. «Կրկին կակամումն եմաս կուրացելոյ աչացս, տեսանելով սակաւ ինչ ի վերայ եկեալ անեզրական տառապանս»⁷:

Այդ ծանր չարիքից «հեղձամղձուկ» եղած՝ մեղադրում է մեր «Արամյան» անվտանգությունը: Նյութը վերցնելով Խորենացուց⁸ նա Պատմաբոլոր պես նաև քննադատում է «Արա-

¹ Տե՛ս Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1996, էջ 5-14, 29-30:

² Տե՛ս նույն տեղը, էջ 18-20:

³ Տե՛ս Երվանդ Լալայան, Երկեր, հ. Ա., Երևան, 1983, էջ 375-378:

⁴ Տե՛ս Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, էջ 45:

⁵ Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 59-61:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 57-64:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

⁸ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 104-105, 108-109:

մեան սեռի հպարտություն և անամոք բնություն և խստապարանոց» բարքերը: Նրա մորմոքը ծնվում է դեպքերի ողբերգականությունից և անելանելի վիճակից: Ցավում է, որ ոչինչ չի արվել աղետը կանխելու համար, իսկ այժմ իրենք մեմ են մավաբեկյալների, որոնց քշում է սանդարամետական հողմը:

Խորենացու հիշատակած անունները Գր. Մագիստրոսն իմաստավորում է, գնահատում և ինքը ևս մրանց հերոսական անցյալը հակադրում ժամանակի թշվառ վիճակին:

Թվարկված անունները, մրանց հերթականությունը որոշ դեպքերում խախտվում են ու ընդմիջարկվում ուրիշներով: Դա խոսում է հեղինակի կողմից լրացուցիչ աղբյուրների գործածության մասին: Հարցի լուսաբանման համար օգտակար դիտողություններ է անում մշահավոր հայագետ Կ. Կոստանյանցը⁹:

Այսպիսով՝ Գր. Մագիստրոսի չափածոյին (մասնավորաբար ման չափածո թղթերին) ավելանում է ևս մեկը՝ «Ողբ ի վերայ Արամեանն մահանգի» երկը: Դա գալիս է հաստատելու, որ մրա արձակը ներքին ուժով և տաղաչափական որոշակի յուրահատկություններով օժտված հուզական արձակ է: Մագիստրոսի Ողբը շատ հետաքրքիր, անսովոր զարգացում ունեցող ստեղծագործություն է: Ստորև այն ներկայացնում ենք համապատասխան չափածո տողատմամբ:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՐԱՄԵԱՆՍ ՆԱՀԱՆԳԻ

Վա՛յ, ի վերայ Հայկեան և Արամեան մահանգի՝
իբրև մուիրական ստգտանք,
Զորս ասեալ փութանակի զանփարատելին
անիծից ինձ քուրձ:

Ո՛ր Յաբեթ, թեպէտ կրտսեր, կորովի,
Ո՛ր Յապետութեան յարմարութիւն մատանց և քաջութիւն,
Ո՛ր Թիրասեան թագ և զօրութիւն,
Ո՛ր Թորգոմեան թևակախութիւն,
Ո՛ր Հայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն,
Ո՛ր Արամեան արմատ և մեծութիւն,
Ո՛ր Արամայիսեան արութիւն,
Ո՛ր Ամասիայն աստանօր տեսութիւն,
Ո՛ր Գեղամայն գեղեցկութիւն,
Ո՛ր Հարմայն հոյակապ հիմնարկութիւն,
Ո՛ր Արամ՝ Արամեան մահապետն,
Ո՛ր Արայն Գեղեցիկ՝ Այրարատեան կերտացող,
Ո՛ր Անուշաւան՝ անուշակացն կազմիչ
և բարութեան յարդարիչ,

⁹ Տե՛ս Թղթեր, էջ 318-324:

Ո՛ւր Պարէտ՝ պարառաբար պերճացեալ,
 Ո՛ւր Արքակ՝ արքանեակ բարեաց,
 Ո՛ւր Զաւան՝ զօրաւոր զինաւ,
 Ո՛ւր Փառնակ՝ փառացի գեղաշուք,
 Ո՛ւր Սուր՝ սիրելիմ սէրուն,
 Ո՛ւր Հաւանակ զիրաճաւան և յստակ,
 Ո՛ւր Վաշտակ, որ ըստ անուան վաշեակ,
 Ո՛ւր Հայկեակ, որ ըստ հաւուն իր հակակ,
 որ է հարթակ հաւասար,
 Ո՛ւր Ամբակ, որ միշտ մանուկ պատանեակ,
 Ո՛ւր Առնակ, այսինքն՝ արի այրական,
 Ո՛ւր Ծավարշ՝ ըստ պարսկականին շարի բաշ՝
 միշտ ուրախ թարգմանեալ,
 Ո՛ւր Նորայր, վասնզի մոր այրութիւն
 ցուցանէր մշտայարմար զօրութեամբ,
 Ո՛ւր Վստամ. սա մեծարու զօրացն
 վեհաստամ կոչեցաւ,
 Ո՛ւր Կար՝ իբրու կարօղ բոլորին,
 Ո՛ւր Գոռակ. սա խիզախօղ ի մարտի
 և մեծաձայն գոռո ունէր,
 Ո՛ւր Հրանտ՝ հրատեսակ գեղատիպ,
 Ո՛ւր Ընծաք. սա ընծայեալ ի բազմաց արքայից,
 Ո՛ւր Գղակ. սորա գեօղս բազումս կերտացեալ,
 Ո՛ւր Հօրայ՝ հզօրացեալ հայրենեօք,
 Ո՛ւր Զարմայր՝ զարհուրելի զօրութեամբ,
 ի Հելլենացոց մեռանի,
 Ո՛ւր Պերճ՝ պաճուճասէր այր և սէգ
 ի Սանեան մահանգէ,
 Ո՛ւր Արբուն՝ բնականագոյն զօրութեամբ,
 Ո՛ւր Բազուկ՝ Բզնունեան մահապետ,
 Ո՛ւր Հոյ՝ հրաշակերտն տեսլեամբ,
 Ո՛ւր Յուսակ՝ յուսացեալ զօրութեամբ,
 Ո՛ւր Կայսակ՝ իբրու կապտօղ զբազումս,
 Ո՛ւր Սկայորդի, որ և հսկայ էր տեսլեամբ,
 Ո՛ւր Պարոյր՝ առաջինմ մեր պսակաւոր,
 Ո՛ւր Հրաչեայ՝ գեղեցկատեսիլ երեսօք,
 Ո՛ւր Փառնաւաւ՝ փառացի, փառասէր,
 Ո՛ւր Պաճոյն, որ բոլորովին էր պատշաճ,
 Ո՛ւր Կոնակ, որ թեկն ածէր կոնակաւ
 և մահանջէր մարտոցեալ,

Ո՛ր Բառս՝ փառացի, և ըստ պարսկականին՝ բազմանի,
Ո՛ր Հայկակ՝ համանման իր հաւում,
Ո՛ր Երուանդ, որ ի մարտին լինէր անդ,
Ո՛ր Տիգրան, որ ըստ Պարթևին մեծ և ծանր,
Ո՛ր Բար՝ այսինքն դռն բարեաց,
Ո՛ր Տիրան՝ որպէս Տիգրան, միով պակասեալ
զծիւ կրտսէր գոլ մմա,
Ո՛ր Վահագն, որ և Երկնէր երկիր, և որ
զկնի առասպելին առումն,
Ո՛ր Առաւան, որ աւետէր զբազումս,
Ո՛ր Ներսէհ, որ և գետ յող ասացեալ,
Ո՛ր Զարեհ՝ զարմացման արժանի,
Ո՛ր Արմօգ՝ Արամեան շառաւիղն,
Ո՛ր Բազամար, որ զբազինսն յարդարէր,
Ո՛ր Վան՝ վանօղն բազմաց,
Ո՛ր Վահէ՝ վեհն և վախճանեալ:

(Յայսմ վայրի թողից գայնոսիկ, որ զկնի
այսմ մինչև ցայս ընդ լծով ծառայեալ,
որ և ի մեզ հասանէ տողանի, բայց և
ահա ոչ թողից չասել զՊարթևացն պարոս):

Ո՛ր և Վաղարշակ՝ քաջ ի քաջացն Բախլայ,
Ո՛ր Արշակ և Արտաշէս,
Ո՛ր Տիգրան և Արտաւազդ,
Ո՛ր Արշամ և Աբգար կամ Սանատրուկ և Երուանդ,
Արտաշէս և միւս Արտաւազդ, Տիրան, Տիգրան, Վաղարշ և Խոսրով
Ո՛ր մերն Տրդատ, Խոսրով, Տիրան և Տիգրան,
Արշակ, Վարազդատ, Արշակ և վերջին Վաղարշակ: